ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ,ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ

ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ

«ԿՈՏԱՅՔԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋ» ՊՈԱԿ

Հաստատում եմ՝ _____ Ա. Երեմյան

Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջի

կառավարման խորհրդի նախագահ

«05» _____ 2025 թվական

ԸՆԹԱՑԱԿԱՐԳ

ԿՏՊՔ ՀԱՐՑՈՒՄՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ

(ՎԵՐԱՆԱՅՎԱԾ)

Հրազդան 2025

1.ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1 Սույն ընթացակարգը սահմանում է ԿՏՊՔ դասախոսների, անձնակազմի, ուսանողների, շրջանավարտների, արտաքին շահակիցների շրջանում անցկացվող հարցումների տեսակները, նպատակները, առարկան, հարցումների անցկացման կարգը և պարբերականությունը,

1.2 Հարցումների նպատակն է ԿՏՊՔ-ում ուսումնական, կրթական գործընթացից, ուսումնական միջավայրից ուսանողների, շրջանավարտների բավարարվածության աստիճանի բացահայտումը, մշտադիտարկումը, որակի ապհովումը,

1.3 Հարցումները հանդիսանում են անձնակազմի և ուսանողների, արտաքին շահակիցների կարիքների վերհանման և գնահատման միջոց,

1.4 Հարցումները օգտագործվում են ուսումնասիրվող գործընթացի գնահատման, բարելավման, ներքին և արտաքին շահակիցների հետ հետադարձ կապի, նոր առաջարկների մշակման նպատակով,

1.5 Հարցումները ԿՏՊՔ-ում պարբերական գործընթաց են և կազմում են որակի մշակույթի բաղկացուցիչ մասը,

1.6 Սույն ընթացակարգը բխեցվում է ԿՏՊՔ ռազմավարությունից և Որակի ապահովման քաղաքականությունից, Որակի կենտրոնի գործունեության կանոնակարգից,

1.7 Սույն ընթացակարգը մշակում, վերանայվում է ԿՏՊՔ Որակի կենտրոնի կողմից և առաջարկով, հաստատվում ԿՏՊՔ Կառավարման Խորհրդում,

1.8 Սույն ընթացակարգում փոփոխությունները, լրացումները ու վերանայումները իրականացվում են նույն կարգով:

2.ԿՏՊՔ-ի ՀԱՐՑՈՒՄՆԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎՈՂ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐՆ ԵՆ՝

Ուսանողների շրջանում անցկացվող հարցումներ՝

- Ուսումնառության որակը,
- Դասավանդման որակը ,
- Ուսումնառության միջավայրը, ռեսուրսները, դրանց հասանելիության և կիրառելիության աստիճանի բացահայտումը,

- Դասավանդող անձնակազմի մանկավարժական և մասնագիտական հմտությունները,
- Կուրսղեկների աշխատանքների որակը,
- Վարչական և այլ ծառայությունների որակի գնահատումը ուսանողի կողմից,
- Պրակտիկաների կազմակերպման, անցկացման որակը,
- ԿՏՊՔ-ն ընտրելու շարժառիթների բացահայտումը,
- Ուսանողների այլ կարիքների վերհանումը, գնահատումը,
- Այլ :

Անձնակազմի շրջանում անցկացվող հարցումներ՝

- Կառավարչական գործընթացների որակի գնահատումը,
- Ստորաբաժանումների աշխատանքների որակի գնահատումը,
- Պրակտիկ դասավանդողների դիտարկումների գնահատումը ԿՏՊՔ ուսանողների վերաբերյալ,
- Քոլեջի տարբեր գործընթացներից անձնակազմի բավարարվածության բացահայտումը,
- Անձնակազմի կարքիների վերհանումը և գնահատումը ,

Շրջանավարտների շրջանում անցկացվող հարցումներ՝

- Ուսումնառության և դասավանդման որակը ,
- Ուսումնառության միջավայրը, ռեսուրսները, դրանց հասանելիության և կիրառելիության աստիճանի բացահայտումը
- Դասավանդող անձնակազմի մանկավարժական և մասնագիտական հմտությունները,
- Վարչական և այլ ծառայությունների որակի գնահատումը ուսանողի կողմից,
- Պրակտիկաների կազմակերպման, անցկացման որակը,
- Քոլեջում ստացած գիտելիքների, կարողությունների և հմտությունների համապատասխանությունը աշխատաշուկայի պահանջներին
- Այլն

(վերանայվել է 2025 թվականի փետրվարին)

Գործատուների շրջանում անցկացվող հարցումներ՝

- Քոլեջի կողմից տրամադրվող աջակցություն, կրթական ուղղորդում
- Քոլեջի հետ հետադարձ կապի ապահովումը
- Քոլեջում ուսանողների ստացած գիտելիքների համապատասխանությունը աշխատաշուկայի պահանջներին
- Քոլեջի շրջանավարտ –աշխատակիցների հմտությունները և կարողությունները
- Այլն

(վերանայվել է 2025 թվականի փետրվարին)

3.ՀԱՐՑՈՒՄՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՀԻՄԱՆԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐՆ ԵՆ՝

3.1 Մասնակցության գաղտնիությունը,

3.2 Հարցման գործընթացի համակարգվածությունը և կանոնակարգվածությունը,

3.3 Հարցման չափանիշների կիրառումը, արդյունավետ թիրախավորումը,

3.4 Շարունակականությունը,

3.5 Պարբերականությունը,

3.6 Տեղեկատվական հագեցվածությունը.

3.7 Տվյալների արժանահավատություն

(վերանայվել է 2025 թվականի փետրվարին)

4.ՀԱՐՑՈՒՄՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ՝

4.1 Հարցումների կազմակերպումը և անցկացումը նախաձեռնում է ԿՏՊՔ-ի Որակի կենտրոնը՝ համաձայն իր գործունեության կանոնակարգի, Որակի ապահովման քաղաքականության,

4.2 Հարցումները անցկացվում են Որակի կենտրոնի տարեկան պլանավորումների համաձայն, կարող են նաև ընթացիկ հարցումներ կազմակերպվել ըստ կարիքի, առանց պլանավորման,

4.3 Ուսումնական տարվա սկզբում Որակի կենտրոնը կազմում է հարցման պլան-ժամանակացույց՝ ուսումնական գործընթացի տարբեր խնդիրները և գործընթացները ուսումնասիրելու նպատակով,

4.4 Հարցումների հարցաշարերը կազմվում են Որակի կենտրոնի կողմից, հարցաշարերի հարցերը քննարկվում, հաշվի են առնում շահակիցների կարիքները,

4.5 Հարցաշարերը ենթակա են լրամշակման, փոփոխման, վերանայման՝ ըստ կարիքի,

4.6 Հարցումների պարբերականությունը սահմանվում է Որակի կենտրոնի տարեկան աշխատանքների պլանավորման համաձայն, որը հաստատվում է տնօրենի կողմից,

4.7 Հարցումները անցկացվում են տեղում կամ առցանց տարբերակով՝ google forms ձևաչափով,

4.8 Տվյալների հավաքագրումը կատարվում է ըստ նախապես մշակված պլանի և ձևաչափերի,

4.9 Հարցման մասնակիցները հարցաթերթիկները լրացնում են ինքնուրույն՝ պահպանելով գաղտնիությունը, պատասխանները տրվում են ըստ հարցաթերթիկը լրացնելու ուղեցույցի,

4.10 Հարցումները ուղղորդվում են հարցման նպատկները պարզաբանելու և հարցաթերթիկների նմուշների ցուցադրությամբ, որոնք կիրառվելու են հարցման ընթացքում,

4.11 Հարցման արդյունքները վերլուծվում, ամփոփվում են Որակի կենտրոնում, կազմվում է համապատասխան վերլուծություն և ներկայացվում համապատասխան օղակներին, շահակիցներին, խնդրահարույց դեպքերում կարող են արդյունքները քննարկվել Մանկավարժական խորհուրդների նիստերին,

4.12 Հարցման արդյունքներում դուրս բերված տվյալները հաշվի են առնվում կրթության որակի և գործընթացների հետ կապված որոշումների ընդունման ժամանակ,

4.13 Հարցման արդյունքների վերլուծությունները պահպանվում են Որակի կենտրոնում, թղթային կամ էլեկտրոնային տարբերակով:

4.14 Հարցման արդյունքների արժանահավատությունը ապահովելու նպատակով ապահովվում է յուրաքանչյուր թիրախային խմբի(մասնագիտական կուրս, ամբիոն, դասախոսներ,ուսումնաօժանդակ անձնակազմ, գործատուներ, շրջանավարտներ և այլն) առնվազն 50% մասնակցությունը:

(վերանայվել է 2025 թվականի փետրվարին)

5. ՀԱՐՑԱԹԵՐԹԵՐԻ ՄՇԱԿՈՒՄ

5.1 Հարցաշարերը կազմելիս ուշադրություն է դարձվում հարցերի բովանդակությանը և տրամաբանական հաջորդականությանը,

5.2 Հարցերը կազմում են հստակ և հասկանալի,

5.3 Հարցերը կազմվում են՝հնարավորինս բազմաթիվ պատասխաններից խուսափելու մոտեցմամբ,

5.4 Հարցերը մշակելիս նախապես սահմանվում են հավաքագրվող անհրաժեշտ տվյալների բովանդակությունը,

5.5 Հավաքագրված տվյալների հավաստիությունը ապահովվում է,

5.6 Բացառվում են հարցեր, որոնց արդյունքում որևէ անհրաժեշտ տվյալ չի հավաքագրվելու,

5.7 Հարացաշարերը կազմել ըստ մշտադիտարկվող գործընթացի, հարցաշարում պարտադիր ներկայացնել հարցման բնույթը և նպատակը, հարցումն իրականացնողին,

5.8 Հարցաշարերը մշակելիս նախապես իրականացնել կարիքների գնահատում հավաքագրելով նաև շահակիցների կողմից առաջադրվող հարցեր,

5.9 Լրացված հարցաշարերը ենթակա են վերլուծության, ամփոփման. կատարվում է հավաքագրված տվալների վերլուծություն՝ կիրառելով տարբեր դիագրամներ,

5.9.1 Հարցաշարերում ընդգրկված հարցերը պետք է ծառայեն խնդիրների, թույլ կողմերի վերհանմանը, բացահայտմանը, ինչպես նաև հավագագրված տվյալները պետք է հիմք ծառայեն բարելավումների, համապատասխան առաջարկների և մշտադիտարկվող գործընթացների շարունակական բարելավման համար,

5.9.2 Հարցաշարերը ենթակա են մշտադիտարկման, ըստ անհրաժեշտության կարող են փոփոխվել, լրամշակվել:

Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջի տնօրենի ժամանակավոր

պաշտոնակատար՝ Ք. Հակոբյան